

ՊԱՏՈՒԻ ՀԱՄԱՐ

ԴՐԱՄԱ ՉՈՐՏ ԱՐԱՐՈՒԱԾՈՎ

ԳՈՐԾՈՂ ԱՆՁԻՆՔ

ԱՆԴՐԵԱՄ ԷԼԻԶԲԱՐԵԱՆ. Տեղական յայտնի հարուստ ներից մէկը, 55 տարեկան առոյգ եւ ամրակազմ տղամարդ, կարճ խուզած ալեխան մազերով, ցանցուով միքուքով եւ կարմիր այտերով։

ԵՐԱՆՈՒՀԻՆԻ. Նրա ամուսինը, Քահանայի դուստր, 46 տարեկան, ժամանակից առաջ թառամած, դժգոյն, նիշար կին համակրելի եւ գեղեցիկ։

ԲԱԳՐԱՏ. Էլիզբարեանների աւագ որդին, Ժամանակակից գործնական երիտասարդ, 27 տարեկան, եռանդուն դէմքով։ Ջեւերն ու շարժումներն արագ են, ոճը կտրուկ եւ դրական։

ՍՈՒՐԵՆ. Էլիզբարեանների երկրորդ որդին, 23 տարեկան կենսախինդ երիտասարդ, որի դէմքը կրում է շուայտ կենցաղի վաղաժամ հետքերը, բայց համակրելի է Հագնում է վերջին տարազով։

ՈՉԾԱԼԻԱ. Էլիզբարեանների մեծ աղջիկը, 24 տարեկան, բաւական գեղեցիկ, բայց չափազանց ինքնագոհ դէմքով օրիորդ։ Հագնում է միշտ շքեղ, առանց գոյների խըտրութեան։

ՄԱՐԴԱՐԻՏ. Էլիզբարեանների երկրորդ աղջիկը, 22 տարեկան, մոտախոհ դէմքով, արտայայտիչ աշքերով օրիորդ, մի քիչ մօրը նման, բայց աւելի գեղեցիկ։ Հագնում է համեստ ճաշակով։

ԱՐՏԱՇԵՍ ՕԹԱՐԵԱՆ. Անդրէասի հանգուցեալ ընկերոջ որդին եւ նախկին որդեպիրը, 26—27 տարեկան, իսոհուն դէմքով, նեարդային շարժումներով։ Հագնում է միշտ սեւ-

ՍԱՂԱԹԵԼ: Երանունու եղբայրը եւ Անդրէասի հաւատարիմ աջակիցը։ Մօտ 50 տարեկան, անվրդով, բայց խորամանկ դէմքով։ Երեսը սափրում է, քունքերի մօտ փոքրիկ մօրուհատներ թռղնելով։ Հազնում է միշտ միատեսակ—լայն վարտիկ, սեւ աթլասի արխալույ, վրէն երկարաւուն, լայն պիչակ։ Վզովը զցած է ժամացոյցի ոսկէ շղթայ։ Մէջքին կապած է ոսկէ քամար։ Միշտ գործ է առում դեղին սաթի տէրողորմեա խոշոր հատիկներով։ Կոշիկների տակերը մի մատնաշափ հաստ են։

ԱՐԻՍՏԱԿԻԾ ԿԱՐԻԿԱՆՆ: Անդրէասի հաշուապահը։ Ժամանակից առաջ ծերացած, 42 տարեկան տղամարդ։ Սովորական ծառապողի միջին տիպար։

ԳԱՐԴԱՆ: Սպասարոր Էլիզբերեանների գրասենեակուն։ Երիտասարդ։ Խօսում է Շամախու քաղքառով։

ԶԱՐՈՒՀԻ: Երիտասարդ աղախին։

Դործողութիւնը կատարում է Էլիզբերեանների տանը։

Մեր ժամանակի անցք։

ՊԱՏՈՒԻ ՀԱՄԱՐ

ԴՐԱՄԱ ՉՈՐՍ ԱՐԱՐՈՒԱԾՈՎ

ԱՐԱՐՈՒԱԾ ԱՌԱՋԻՆ

Բեմը ներկայացնում է Անդրէաս և Բագրատ Եշլքարեանների պարապելու սենեակը, որ բռնում է սեպհական տան վերին յարկում անկիւնային դիրք բնակարանի և դրասենեակի միջեւ:

Միջին մնծութեամբ սենեակ: Աչ *) պատի մէջ դէպի փողոց երկու մնձ լուսամուտներ, որոնց մէջտեղում դրած է Անդրէասի գրասեղանը, վրէն, բացի դրելու պարագաներից, համարակալ, հեռախօսի ապարատ և Էլեկտրական շարժուն լամպար: Սեղանի դրվ, պատի կողմում մի մնձ բազկամոռ, միւս կողմում՝ մի հասարակ աթոռ:

Խորքի պատի մէջ երկու դրամեր, մէկը բեմի կնտրոնական ուղղութեամբ, դէպի դրասենեակ, միւսը բոլորպին ձախ, զրեթէ անկիւնում, դէպի նախասենեակ:

Ձախ պատի մէջ եւս դռներ, որոնք տանում են դէպի բնակարան: Այս դռների մօտ, դէպի աւանսցնա Բաղրատի գծասեղանը, վրէն, բացի սովորական պարագաներից, զրելու գործիքներ, գրագրութիւններ և մի քանի մասնագիտական դրեր ինժեների համար: Սեղանի ետեւում երկաթէ դրամարկը Խորքում, դէպի աջ — վառարան.

Պատերի տակ աթոռներ: Ցատակի աջ կողմը ծածկուած է գորգով: Լուսամուտները վարագուրուած է:

Ներկայ պիեսը ներկայացնելու իրաւունքը վերապահուած է Ալէքսանդր Շիրվանզադէին: Այն անձինք, որոնք, առանց հեղինակից իրաւունք ստանալու, կը ներկայացնեն պիեսը, կենթարկուեն օրինական դատի: Իրաւունք ինդրելու համար պէտք է դիմել: Տիֆլիս—Ա. Շարվանզած.

*) Եանոր. Աչ ու ձախ ընդունել հանդիսականների կողմից:

ՃԵՍԻԼ I.

ՍԱՀԱԹԷԼ ԵՒ ԿԱՐԻՆԵԱՆ

Վարագոյրը բարձրանալիս Սաղաթէլը, Անդրէասի գրասեղանի քով կանգնած, հեռախօսով խօսում է. Խորքի դոները բացում են, ներս է մտնում Կարինեանը եւ սկզբսում է Անդրէասի գրասեղանի վրայ շատ դանդաղ ինչոր փնտրել. Այս դրութերը բացուելիս հեռու երեսում է մի բարձր հաշումսեղան, որի քով կանգնած պարապում է մի երիտասարդ. Մերթ ընդ մերթ երեսում են եւ ուրիշ ծառայողներ, նաև այցելուներ, որոնք այս ու այն կողմէն անցնում գրադուած դէմքերով: Գործողութեան ընթացքում, մինչեւ գրասենեակի փակուիլը, այնտեղից լսում են համարակալի շխշկոց եւ հեռախօսի զանգակի հնչիմններ:

ՍԱՀԱԹԷԼ: (Հեռախօսով) «Համէէէ՞»: Այս, շուտով կը գայ: Հըմ, չեմ լսում: Համար Լաւ, ուղարկեր: Ցը տեսութիւնն: (Զանգակը հնչեցնում է եւ գործիքը զնուած իւր տեղով): Օրհնուի տելեփոն հնարողը, շատ լաւ բան է վաճառականի համար: Հա, ինչ էի ասում, Արիստակէս, հէնց որ ձեռքիդ գործը վերջացնես, կըսկսես Բագրատի հաշիւը կազմել: (Հեգնօրէն) Մեր պարոն ինժեները ուզում է իմանալ, ինչքան է ծախսուած իւր գործարանի վրայ:

ԿԱՐԻՆԵԱՆ: Բայց դուք ձեր արած ծախսերի հաշիւները գեռ չեք ներկայացրել գրասենեակին: Պարոն Բագրատն ամեն մի ծախսի համար արդարացուցիչ դօկումենտ է պահանջում:

ՍԱՀԱԹԷԼ: Բան է հնարել պարոն Բագրատ—արդարացուցիչ դօկումենտ: Ես Անդրէաս էլիոդարեանի մօտ մինչեւ օրս առանց արդարացուցիչ դօկումենտի եմ ծառայել, էլի կը ծառայեմ: Հայրը հաւատացնում է, թող որդին էլ հաւատայ (Լոռութիւն): Այդ ինչ ես վնարում:

ԿԱՐԻՆԵԱՆ: Մնացականեանների պայմանագիրը: (Դադարում է փնտրել):

ՍԱՂԱԹԻԼ. Հեր օրհնած, այսքան ժամանակ ծառայում ես այստեղ, էլի չըդիտե՞ս, որ Անդրէաս էլիզբարեանը սեղանի վրայ երբէք հարկաւոր թղթեր չի թողնում:

ԿԱՐԻՆԵԱՆ. Ճշմարիտ, ես մոռանում եմ, որ էլիզբարեանը բոլոր մարդկանց համարում է գողի ծննդենէ:

ՍԱՂԱԹԻԼ. Այո, նրա կարծիքով, մարդիկ դողանում են ամեն ինչ, որ կողպէքի տակ չէ: Եւ այդ շատ ճիշտ կարծիք է: Աշխարհի երեսին դրուստ մարդ չըկայ, բուլորը գող են: (Տէրողորմեան ծեռների մէջ տրորում է եւ հոտ քաշում):

ԿԱՐԻՆԵԱՆ. Խղճի դէմ բան էք ասում, պարոն Ասդաթէլ:

ՍԱՂԱԹԻԼ. Էհ, դու էլ խօսքի տակին դլսին—խիղճ: Խնչպէս տեսնում եմ, այդ կերակուրը շատ ես սիրում: Ափսոս որ փոր կշատացնող չէ:

ԿԱՐԻՆԵԱՆ. Այո, շատերի համար անմարսելի է:

ՍԱՂԱԹԻԼ. Խնչպէս, օրինակ, հրամանոցդ համար Տեսնում եմ, քառասուն ու երկու տարեկան մարդ ես, մազերդ ճերմակել են, մէջքդ ծոռւել է և էլի, խիղճ ասելով, հալում ես երանի գիտենայի, այսօր էգուց որ ստներդ ձգես, կնիկդ գրպանումդ պատանի փող կը գտնի:

ԿԱՐԻՆԵԱՆ. Կարող է շրդանել, բայց ես գոնէ հանգիստ հոգով կըմեռնեմ:

ՍԱՂԱԹԻԼ. (Կծու հեգնութեամբ) Խնչպէս չէ, կէս գիւժին ճընկլընտեր քաղցած փորով թողնելով փողոցում: Էէհ, պարօն, խիղճը լաւ բան է, միայն ափսոս որ գերի է ընկել փողի ձեռքը և օր օրի վրայ մաշում է տանջանքից: Հա, ինչ էի ուղում հարցնել: այսօր Օթարեանն եկել է այստեղ:

ԿԱՐԻՆԵԱՆ. Ոչ:

ՍԱՂԱԹԻԼ. Էհ, դոհութիւն Աստծու: (Տէրողորմեան տրորում է եւ հոտ քաշում:)

ԿԱՐԻՆԵԱՆ. Առացէք, ինդրեմ, ինչ է պատահել
այդ երիտասարդի և պարոն Անդրէասի մէջ։

ՍԱՂԱԹԷԼ. Այդ երկար պատմութիւն է։ Բայց մեր
դործը չէ։

ՏԵՍԻԼ Ա.

ՆՈՅՆՔ ԵՒ ՍՈՒՐԷՆ

ՍՈՒՐԷՆ. (Ներս է մտնում շտապով ծախ դրաներից
վերաբերութիւն ու զլիարկով) Պապան այստեղ չէ։ Աւելի
լաւ։ (Սաղաթելին) Քեռի, ի սէր Աստծու, տնւր ինձ
իսկոյն երեք հարիւր ռուբլի։

ՍԱՂԱԹԷԼ. (Տէրողորմեան գրպանը դնելով) Հէ՛ հէ՛,
էլի վաղեց գլխիս, (Սուրէնին) Խոնչ է պատահել, էլի
բարկացած ես։

ՍՈՒՐԷՆ. Հարց, ու փորձի ժամանակ չէ։ Ինձ ձեւ
ուաց երեք հարիւր ռուբլի փող է հարկաւոր։
ԿԱՐԻՆԵԱՆ. Երսի, էլի բակարայում տանուլ էք
տուել։

ՍԱՂԱԹԷԼ. Բաս չէ, առուտուրում մնաս է արել։
Սրանը կամ բակարան է կամ թխլիկ-թխլիկ մամզէլ-
ները։

ՍՈՒՐԷՆ. (Գրգութելով Կարինեանի դէմ) Պարօն թա-
նաք լղող, այդ ձեր գործը չէ, ինդրեմ անկոչ վերա-
հսկողի գեր չըկատարէք։ Քեռի, եթէ այս ըոպէին ե-
րեք հարիւր ռուբլի չունենամ—կը խայտառակուիմ։
Պատուի ինդիր կայ մէջ տեղ։ Եթէ ինձ սիրում ես, մի
ուշացնիր։

ՍԱՂԱԹԷԼ. Եատ եմ սիրում, Սուրէն ջան, բայց որ
փող չըկայ, ինչ անեմ։ Քեզ յայտնի է, որ այժմ հօրդ
գործերը եղբայրդ է կառավարում։ (Տէրողորմեան գըր-
պանից հանում է)։

ՍՈՒՐԷՆ. Եղբայրս, եղբայրս, ամեն տեղ նա ինձ
խանդարում է։ Բայց թող սպասի, մի օր ատամներս
ցոյց կըտամ նրան։

ՍԱՂԱԹԵԼ: Ե՛տ, նա այն պտուղներից չէ, որ քո առաջաներից վախենայ:

ՍՈՒՐԵԿՆ. (Անհամբեր) Տալու ես փող, թէ՞ չէ:

ՍԱՂԱԹԵԼ. Այ եղբայր, ես ի՞նչ անեմ, ահա, նա մնդուկը, առ էլ դու, համեցէք, վերցրու, ի՞նչ ես եալխիցս կպել:

ՍՈՒՐԵԿՆ. Բանալին տուր:

ՍԱՂԱԹԵԼ: (Հառաշելով) Զըկայ, Սուրէն ջան, չը կայ: Այժմ արքայութեան դռների պահապանն ես չեմ: Մէկէլ, մեր մէջ ասած, հիմայ այդ մնդուկում, բացի պայմանագրերից և վէքսիլներից, ոչինչ չըկայ: Եղբայրդ մեր կարդ ու կանոները փոխել է: Դրանից առաջ այդ մնդուկում ատար-բան հազարներով փող է: Մինում շառքաթներով ընկած: Հիմա եղբայրդ բանկումն է պահում:

ԿՈՐԻՆԵԱՆ: Նա ասում է փողն ու խեցը միշտ շարժման մէջ պէտք է լինին:

ՍՈՒՐԵԿՆ. Որ այդպէս է, տուր քո գրապանից:

ՍԱՂԱԹԵԼ. Սուրէն ջան, ախար ես փող հրատեղից ունիմ: Ես մի խեղճ գործակատար եմ:

ՍՈՒՐԵԿՆ. Ելի մի սկսիր Դազարոսի շարականն երգել, կաշիդ գաբախանում կըճանաչեմ: Քո կօշիկների այդ հաստ կարկատանի մէջ էլ փող կայ:

ՍԱՂԱԹԵԼ. Տէր, Անցո զբաժակս այս յինէն:

ՍՈՒՐԵԿՆ. Դէ լու, հօրդ խօսքերը մի կրկնիր: Ասում են, դու նրան այնքան ես նման, որքան ես Պօղոս Առաքեալին: Հանիր քսակդ, տեսնենք:

ՍԱՂԱԹԵԼ. (Մեկուսի): Դրա ձեռքից ազատուել չի կարելի, (Տէրողորմեան հանդարտ դնում է գրանը եւ շատ հանդարտ պիշակի գրանից հանում է մի ահագին մաշուած, կենդոտ կաշուէ փողաման): Կարծեմ, հարիւր ոուբուց աւելի չոնիմ: (Երեսը դարձնելով, թաքուն նպյում է փողամանի մէջ): Փահ, իսկի հարիւր էլ չըկայ, յիսուն է:

ՍՈՒՐԵԿՆ. Այդ հեշտ է ստուգել: Տնը ինձ այդ տոպրակը, տեսնեմ: (Փողամանը խլում է):

ՍԱԴԱԹԵԼ. (Վախեցած): Վայ, այդ ինչ ես անում՝
ՍՈՒՐԵԼՆ. Ուզում եմ մի քիչ հետազօտել այս հնաւ-
գիտական գղրոցը: (Սկսում է փողամանը տնտղել եւ
մէկ մէկ դուրս է քերում անուանած իրերը:) Այստեղ
մտիկ արէք, ինչ ասես—կայ: Հին մուգհակներ, ակցիա-
ներ, բանկային կարոններ, գերբովայեա մարկաներ,
ետոլիկ գինու շիցեց...

ՍԱԴԱԹԵԼ. Աղա, ամօթ է:

ՍՈՒՐԵԼՆ. (Դուրս է քերում մի նամակ): Այս ինչ
բան է, Վարդադոյն թղթի վրայ նամակ, կնոջ ձեռքով
դրումձ: (Հոտ է քաշում): Անուշահնտ...

ՍԱԴԱԹԵԼ. (Կարինեանից քաշուելով) Աղա, ամա-
չիր, յարդ կայ այստեղ...

ԿԱՐԻՆԵԱՆ. (Թաքուն ծիծաղում է):

ՍՈՒՐԵԼՆ. (Հանելով նամակի միջեց շորի մի կտոր):
Ահա, այս էլ նամակի պատասխանը—գերիացուի նմուշ,
արշինը վեց շահանոց: Տէր ողորմած Աստուած, այստեղ
մտիկ արէք, գեղատոմսեր, սիգնատուրա, աչքի ճար,
քինաքինա, ամբողջ գեղատուն: Պակասում է բժիշկը:
Հապա, տեսնենք ուր է ցաւդ, որ բժշկենք: Ահա, օօ՝,
այստեղ երեք հարիւր էլ կայ, հինգ էլ, տասն էլ:


ՍԱԴԱԹԵԼ. (Ասքողջ ժամանակ սնհանգիստ, աշ-
խատում է փողամանը խլել) Այդ խօմ ափաշկարայ-
կողոպտել է նշանակում: Տեսնում ես, Արիստակէս, օրը
ցերեկով:

ԿԱՐԻՆԵԱՆ. (Մեկուսի) Աւելի լաւ է այդպէս կո-
ղոպտել, քան թագուն-թագուն գողանալ, ինչպէս դուք:

ՍՈՒՐԵԼՆ. Մի վախենար, աւելի չեմ վերցնիլ: Այն,
ցվայ, դրայ, հերիք է: (Փողերը դնում է գրպանը, փո-
ղամանը վերադարձնում է Սաղաթէլին:) Ստացիր թան-
գարանդ, ֆի, մազութի հոտ է փշում:

ՍԱԴԱԹԵԼ. (Փողամանը ծոցը դնելով) Կարող եմ
ասել, որ էլի լաւ պլծայ...

ՍՈՒՐԵԼՆ. Ենորհակալութիւն: Այժմ պատիւս փըր-



կուած է։ Անիրաւները չեին ուզում ինձ հետ ապառիկ խաղալ։ Առւֆվիդերզեհէն։ (Ուզում է գեալ.)

ՍՍՂԱԹէլ։ Ամօթ չը լինի հարցնելը—բաս վեքսիլը։ ՍՈՒՐԻՆ։ Գրիր բեղ յայտնի պայմանով, կըստուրադրեմ, բայց տես, Շէյլօկի տոկոս չըբարդես վրէն։ (Քայլնըն ուղղում է դէպի նախասենեակ.)

ԿԱՐԻՆԵԱՆՆ։ (Դլուխը շարժելով, անցնում է գրասենեակ։)

ՏԵՍԻԼ Ի Յ.

ՍՈՒՐԻՆ, ԵՐԱՆՈՒՀԻ ԵՒ ՍՍՂԱԹէԼ։

ԵՐԱՆՈՒՀԻ։ (Գալիս է ճախ դոներից տնային հագուստով, առանց գլխարկի։ Յուզուած է։) Կաց, մի դնար։

ՍՈՒՐԻՆ։ (Կանգ է առնում։) Էէ, մամա, հերիք է ինչքան լաց ու կոծ բարձրացրիր, ես ներվային մարդ եմ։ ԵՐԱՆՈՒՀԻ։ (Սաղաթէլին) Դու նրան փոխ տուեցի՞ր։

ՍՈՒՐԻՆ։ Այո, մամա, եղբայրդ աւելի բարի գը տնուեց քան դու և մեծ որդիդ։

ԵՐԱՆՈՒՀԻ։ Յետ վերցրու, Սաղաթէլ, յետ վերցրու։ Փողը նրան փշացրեց, փողոցները գցեց։

ՍՈՒՐԻՆ։ Լաւ, մամա, հին երգդերգելու տեղը չէ, գրասենեակից կը լսեն։ (Դրասենեակի դոները ծածկում է։)

ԵՐԱՆՈՒՀԻ։ Էհ, թող լսեն։ Այժմ ամենքն էլ գիւտեն, որ դու որդի չես ինձ համար, այլ Աստծու պատիւ։

ՍՈՒՐԻՆ։ Ինչու Որովհետեւ ապրել եմ ուզում։ Այնպէս, ինչպէս ապրում են իմ բոլոր ընկերները։

ՍՍՂԱԹէԼ։ Այսինքն, բոլոր անառակ զաւակները։ (Մի կողմ) Վայ, ինչ ասացի։

ՍՈՒՐԻՆ։ Քեռի, իմ գործերին մի խառնուիր, Քոննայն է, որ հօրս հաշիւներին վերադիր անես և սպանալ ու դանձիլ ուտես։

ՍԱՂԱԹԵԼ. (Մեկուսի) Լաւ կծեց, տեղն է քեզ。
Սաղաթէլ

ՍՈՒՐԵԼՆ. Իսկ դու, մամա, հոգս արա միւս որդուդ
համար, կարող եմ հաւատացնել, որ նա ինձանից աւել-
լի վատ ճանապարհի վրայ է։ Մեր փողը կեղտ է, նրան
փշացնելը մեղք չէ։ Հասկացար, սիրելի մամա, Յը տե-
սութիւն, ճաշին ինձ չսպասէք։ (Գնում է նախասե-
նեալի դռներով։)

ՏԵՍԻԼ IV.

ԵՐԱՆՈՒՀԻ ԵՒ ՍԱՂԱԹԵԼ.

ԵՐԱՆՈՒՀԻ. (Թուլացած նստում է աթոռներից մէ-
կի վրայ։) Տանջեցին ինձ, բութ դանակով մորթեցին։
Հանել է ոեվօլվերն ու գրել եղբօր կրծքին։ «Փող տուր-
թէ չէ՝ կը սպանեմ»։ Ոտներս թուլացան, աչքերս մըթ-
նեցին, ասացի երկուան էլ կորան։ Մի կերպ բաժանե-
ցի։ Այս, գեռ աշխարհի երեսին կանայք կան, որ ինձ
նախանձում են, հարուստի կնիկ եմ։

ՍԱՂԱԹԵԼ. Եէ, ոյինչ, եթէ մէկ որդիդ անառակ
է, միւսը խելօք է։ Մէկի քանդածը, միւսը շինում է։
ԵՐԱՆՈՒՀԻ. Եհ, չեմ ուզում ոչ քանդողին, ոչ շի-
նողին։ Մէկի համար փողը գերեզման է, միւսի համար
հայր ու հաւատամք։ Երկուան էլ Աստծու ճանապարհից
դուրս են։ Մեր ժամանակում փողը երկնային թագա-
տորի պատիժն է։

ՍԱՂԱԹԵԼ. Օրհնուին նրա կտրողի ձեռները։ Փողի
պէս էլ քաղցր բան կայ աշխարհում։

ԵՐԱՆՈՒՀԻ. Հեթանոսներ, Աստծուած շունիք, Բե-
հեղեքըուղին էք երկրպագութիւն տալիս։

ՍԱՂԱԹԵԼ. Եէ հէ, էլի կրկնեցիր մեր հօր. խօսքերը։
ԵՐԱՆՈՒՀԻ. Լոյս գայ նրա գերեզմանի վրայ։ Նա
ասում էր փողը հնարուած է սատանայի ձեռքով, որ
մաքդկանց գեհենը տանի։

ՍԱՂԱԹԵԼ. Ասում էր, որովհետև քահանայ էր, իսկ մենք աշխարհականներ ենք, մեզ ինչ-

ԵՐԱՆՈՒԽԻ. Վախեցիր Ահեղ Դատաստանից, Սա-
դաթէլ։ Մի պաշտիր փողը կուռքի պէս։

ՍԱՂԱԹԵԼ. Քոյր, Աստծու պատիճն էլ, վարձքն էլ
այս աշխարհումն է։ Ահեղ Դատաստան՝ մադաստան չը
կայ։

ԵՐԱՆՈՒԽԻ. (Զարհուրած) Կայ, անհաւատ, կայ։
ՍԱՂԱԹԵԼ. Դէ հը, կայ, թող լինի։ Բայց հարցրու
մեծ որդուդ, տես նա ինչ է ասում։ Բանից գուրս է
գալիս, որ միւս կեանք ասածդ էլ անբաղդ մարդիկ
են հնարել կրանց այրուած սիրտը միսիթարելու հա-
մար։ Որդիդ է ասում, լսնմ ես, ասում է գիտու-
թեան խօսքն է։

ԵՐԱՆՈՒԽԻ. Անիծուի ձեր գիտութիւնը։

ՍԱՂԱԹԵԼ. Ինչու։ Որ այն հոտած վիյի մոմի տեղ
մեզ պայժառ էլէքտրական լոյս է տուել։ Ասա, ինդ-
րեմ, երկաթուղի, շոգենաւ, տելեգրաֆ, տելեֆօն,
գրամաֆօն գիտութիւնն է հնարել, թէ քո տէրտէրները։

ԵՐԱՆՈՒԽԻ. Չուր չեն ասում, թէ տէրտէրի որդին
անհաւատ կըլինի։

ՍԱՂԱԹԵԼ. Ախ, երանուհի, դու մարդուցդ յիսուն
տարով յետ ես մնացելս Խելքի եկ, բաց արս աշքերդ,
տես ինչպէս են ապրում միւս հարուստների կանայք։
Ուտում են, խմում, քէփ անում, ամեն ամառ գնում
են արտասահման, իսկ դու վազում ես... Ահեղ Դա-
տաստան։ (Փոքրիկ պառլզա) Մի նոր բան էլ այն
փոքր աղջիկդ է հնարել—Մարդարիտը—ճշմարտութիւն,
երէկ սկսեց գլխիս Աւետարան կարդալ. «քեռի, մար-
դիկ պարտաւոր են ճշմարտութիւնով ղեկավարուել»։

ԵՐԱՆՈՒԽԻ. Վատ բան է ասել, համ։

ՍԱՂԱԹԵԼ. Գիտես, սիրելիս, մեր հանգուցեալ հօր
նման ճշմարիտ մարդ հաղիւ թէ լինի այս քաղաքում։
Բայց ինչ թողեց մեզ համար։ Վերջին կոպէկի կարօ-

տութիւն, սովոր Մեռաւ թէ չէ, սկսեցինք սրան-նրան
ձեռք պարզել, Դեռ փառք Աստծու, որ դու մի քիչ
գեղեցիկ էիր, բաղդը քեզ այս տունը դցեց: Խոնչ պի-
տի անէինք, եթէ ելիդրարօվը քեզ հետ չ'ամուսնանար:
Հանդուցեալը մի արհեստ էլ չէր սովորեցրել ինձ: Ու-
զում էր, որ ես էլ տէրտէր դառնամ, այսինքն իւր
նման քաղցածի մէկը: Զէ, քոյր, ոչ քեզ եմ հաւանում,
ոչ Մարդարտին: Ապրել շըգիտէք: Այ, մեծ աղջիկդ,
ըէֆս է գալիս, աշխարհի բերանն է պատռում: Տես-
նում ես առն ու տեղդ ինչպէս է կարդի դցել, ինչ
չիկ է բանեցնում: Մախլաս, դու իսկի նման չես միլ-
լիօնատէրի կնոջ: Էհ, թողնենք, կարծեմ, Անդրէասի
ձայնն է:

ՏԵՍԻԼ Վ.

ՆՈՅՆՔ ԵՒ ԱՆԴՐԷԱՍ:

ԱՆԴՐԷԱՍ. (Եթետում է գրասենեակի դռների մէջ
գլխարկով ու վերարկուով: Մի ոտը շէմքի վրայ, խօ-
սում է դէպի գրասենեակի:) Ասացէք այդ մարդկանց, որ
ես այսաեղ շեմ: Գիտեմ ինչու համար են շնորհ բերել
ծանապարհ դրէք: Յետոյ գրասենեակը փակեցէք, գնա-
ցէք ճաշելու: Դուք հարկաւոր չէք: Իրիկունը շուտ
եկէք: (Ենքու է զալիս, դռները ետեւից ծածկելով):

ԱԱՂԱԹԵԼ. Էլի ովքեր էին:

ԱՆԴՐԷԱՍ. Ազգային ագռաւներ: Փահ, կարծես,
բարեգործական ընկերութիւն եմ բաց արել կամ իրան-
ցից յիմար. եմ, շըգիտեմ, ումն է հարկաւոր օգնել,
ումը—ոչ: Հաւաքուել են մի գիւմին անդորձներ ու
դռնէ դուռն ընկել, թէ ինչ է՝ «Աշխատանքի տան» հա-
մար փող ենք հաւաքում: (Սաղաթէլի օգնութեամբ
հանում է վերարկուն եւ գլխարկի ու ծեռնափայտի հետ
տալիս է նրան: Հազած է լայն եւ երկարաւոն պի-
շակ, լայն վարտիկ: Ժիւետի վրայ ժամացոյցի ոսկէ

շղթայ, աջ ձեռի մատի վրայ ահազին աղամանդեայ մատանի): Աշխատանքի տունս որն է: Աշխատող մարդն ինը գործ՝ էլ կունենայ, տուն էլ: Հաւաքել են ծոյլեւ թին ու անպիտաններին, ձրի կերակրում են, թէ աղդ ենք փրկում:

ՍՍՂԱԹԷԼ. Խմաստունի խօսքեր են: (Վերաբերուն ու ծեռափայտը տանում է նախասենեալ եւ իսկոյն վերադառնում):

ԱՆԴՐԻԱՍ. (Նստում է իւր գրասեղանի քով եւ այդ ալահին տեսնում է Երանունուն): Աա, դու այստեղ ես: Էլի ինչ ես ունքերդ կիտել: (Գրգուում է) Մի սեւացնիր օրս, մի սեւացնիր, առանց քեզ էլ սեւացնողներ կան: ԵՐԱՆՈՒՀԻՆ. Ուզողին մերժելը մեղք է:

ԱՆԴՐԻԱՍ. (Կծու հեգնութեամբ): Հաա, միլիօնաւտերի աղջիկ, աֆարիմ: Որ այդպէս է, տուր էլի քո օւ ժիտից կամ հօրդ թողած ժառանգութիւնից, այ այն մեծ-մեծ բարվանսարաններից:

ԵՐԱՆՈՒՀԻՆ. (Վերկննալով) Դու միշտ իմ հօր աղքատութիւնն երեսովս ես տալիս:

ԱՆԴՐԻԱՍ. Ախար, ինչ անեմ, նա էլ միշտ քարոզում էր. «Բարութիւն արէք»: Ինը չունէր, ուրիշներից էր պահանջում: Բարութիւն: Բարութիւնս որն է: Մարդս անասուն է, ցեխի մէջ որ տեսնես, պէտք է ոտով խըս փես, խորը գցես, ոչ թէ ձեռից բռնես, բարձրացնես: (Սակաւ լուսութիւն: Տոնը փոխելով, Սաղաթէլին): Զի եկել այն տղան:

ՍՍՂԱԹԷԼ. Դեռ ոչ:

ԱՆԴՐԻԱՍ. Ի՞նչ ես ցցուել աչքիս առաջ: Ի՞նչ ես ուզում ինձանից:

ԵՐԱՆՈՒՀԻՆ (Հառաշելով) Ոչինչ:

ԱՆԴՐԻԱՍ. Փառք Աստծու, կարծեցի էլի պիտի սկըս նախատել ինձ:

ԵՐԱՆՈՒՀԻՆ. Ես քեզ Երբ եմ նախատել:

ԱՆԴՐԻԱՍ. Դժու: Դու երեսուն տարի է շարունակ

նախատում ես ինձ, Ես քեզ լաւ եմ ճանաչում, դու իմ առաջին թշնամին ես: (Վեր է կենում եւ սկսում է անցուղարձ անել):

ԵՐԱՆՈՒՀԻՆԻ. Զեմ իմանում, ինչով եմ քո թշնամին: **ԱՆԴՐԻԱՆ.** Խեշնիք, Քո մտքերով: Դու երբէք իմ յասին լաւ բան չես մտածել: (Լոռութիւն): Ի՞նչ է խօսել քեզ հետ Օթարեանը:

ԵՐԱՆՈՒՀԻՆԻ. Արտաշէսը: Ոչինչ: Ինչոր քեզ հետ է խօսում, նոյնն էլ ինձ հետ:

ԱՆԴՐԻԱՆ. Ի՞նչ ես կարծում, նա ինչպիսի՞ տղայ է: **ԵՐԱՆՈՒՀԻՆԻ.** Նա օրինաւոր տղայ է, շատ օրինաւոր, համեստ, խելօք...

ԱՆԴՐԻԱՆ. Լաւ լաւ, մի երկարացնիր, գովելդ աւ և ելորդ է...

ԵՐԱՆՈՒՀԻՆԻ. (Հառաշում է):

ԱՆԴՐԻԱՆ. (Գրգոռւելով) Լսիր, հազար անդամ ասել եմ, էլի եմ կրկնում, թագ այդ հառաջանքներդ, ախու ու վախու: Քո դէմքի վրայ, աջքերիդ մէջ, ամեն մի խօսքիդ տակ ես զգում եմ նախատինք: Քո տիրութիւնն ինձ կատաղեցնում է: Ես շատ լաւ գիտեմ, որ դու ստուերի պէս հետևում ես ինձ, ծուռ եմ զնում ոտս թէ ուղիղ, ումին զրկեցի, ումից աւելորդ վերցրի, ումին պակաս տուեցի: Թագ ինձ հանգիստ, դու իմ խիդն ես, ինչ է: Զի հարկաւոր, կարօտութիւն չունիմ: Իմ մէջ խիզճ էլ կայ, հոգի էլ, Աստուած էլ...

ԵՐԱՆՈՒՀԻՆԻ. (Ծարակուսանքով) Ոչինչ չեմ հասկանում ասածներիցդ...

ԱՆԴՐԻԱՆ. Աս, շատ լաւ ես հասկանում: (Անհանգիստ նայելով ժամացոյցին): Արդէն երկու ժամն է: Չեկաւ այդ տղան:

ԵՐԱՆՈՒՀԻՆԻ. (Զապելրվ իրան) Տանն ես ճաշելու:

ԱՆԴՐԻԱՆ. Ի հարկէ, այդ ինչ հարց է:

ԵՐԱՆՈՒՀԻՆԻ. (Խորհրդաւոր) Ո՞վ գիտէ քո բանը:

ԱՆԴՐԻԱՆ. Այ, տեսնում ես, հէնց այդ ոով գիտէալի

տակ սատանայ է նստած։ Նախատինք, միշտ նախատինք։ Օձի նման է կծում։ Հեռացիր։ Առաւօտից դէս շանպէս անօթի եմ։ Գնա, ճաշ պատրաստիր։ Մի աման էլ Արտաշէսի համար գիր։ Ես նրան ճաշի եմ պահելու։ Լաւ վարուիր նրա հետ, այդ ինձ հարկաւոր է։ Եթէ Բագրատը տանն է, ուզարկիր այստեղ։ (Երանուհին գընում է ծախ դոներով):

ՏԵՍԻԼ VI

ԱՆԴՐԵԱՍ ԵՒ ՍԱՂԱԹԷԼ

ԱՆԴՐԵԱՍ. (Լոռութիւն)։ Քոյրդ ամեն բան գիտէ։ Պէտք է աշխատել, որ նա գործը քբիչացնի։

ՍԱՂԱԹԷԼ. Իսկ դու նրա հետ այնպէս ես վարւում, որ ինքդ կարող ես փշացնել։

ԱՆԴՐԵԱՍ. Այդ ջշմարիտ է։ Ես երբեմն չըդիտեմ ինձ զսպել։ Բայց ինչ անեմ, այսօր առաւօտից դէս գրդուուած եմ։ Մարդիկ սկսել են խօսել իմ մասին։ Աս, ես գիտեմ, որ սև նախանձը նրանց հանդստութիւն չի տալիս։ Անդրէյ Պետրովիչ էլիդքարօվի աստղը շատերի աջքն է ծակում։ Ծներս ու քարվանսարաներս տանջում են մարդկանց։ (Լոռութիւն) Մառայողները գնացին։

ՍԱՂԱԹԷԼ. (Գրասենեակի դոներից ներս նայելով) Գնացել են։

ԱՆԴՐԵԱՍ. (Խօսում է, կարծես, ինքն իւր հետ, անցուղարծ անելով)։ Փահ, էլիդքարօվի տների ու տափերի կէսն իմն է, ասում է. ոչ աւելի, ոչ պակաս։ (Լոռութիւն)։ Ժամանակ-ժամանակ ինքս էլ մտածում եմ, կարելի է պարտական եմ։ Բայց ինչպէս աջքերս բաց վերցնեմ և ունեցածիս կէսը տամ նրան։ Ի՞նչ կասեն մարդիկ, «Հօրս հետ միասին ես առել տափերը»։ Այս, ջշմարիտ է, բայց երբ։

ՍԱՂԱԹԷԼ. Նոյ նահապետի ժամանակներում։

ԱՆԴՐԵԱՍ. Ջշմարիտ է, ընկերներ ենք եղել բայց

չէ որ փողն ես եմ աշխատել, ես, Անդրէաս էլիոբարօվս=
Դալլաք էլիոբարի թոռնը իւր բոլոր կարողութիւնը,
գիրքը, անունը, պատիւը ձեռք է բերել իւր խելքով ու
աշխատանքով: Ճամնուհինդ տարի ծառայել եմ Մուսա-
յէլ աղայի մօտ, տարել եմ նախատինք, թուք ու մուրք
Շան կեանք եմ քաշել, վերջը սուտ-զորթով մի քիչ փող
եմ ձեռք բերել, դուրս եկել և այն ժամանակ ընկերա-
ցել Առաքել Օթարեանի հետ:

ՍԱՂԱԹԷԼ. Հէէ, երազի պէս միտս է. հին բազա-
րում բախկալի դուքան ունէիք: Կանաչեղէն ու թթուե-
ղէն էիք ծախում: Զատիկ-Զրօրհնէրին էլ գնում էիք Սա-
լիան, ձկնեղէն բերում ու ծախում:

ԱՆԴՐԷԱՍ. Խօօք չունիմ, Առաքելն էլ աչքաբաց էր:
Բայց եթէ նրա խելքով վարուէի, այսօր էլ դուքանչու-
մէկը կը լինէի: Նա հոտառութիւն չունէր: Ես էի, որ
անդադար ասում էի: «Առաքել, առնենք այդ էժան տա-
փերից, յետոյ ոսկի են դառնալուա: Սկսեցինք առնել
ծովի ափում հոտած ճահիճներ, աղբանոցներ, սաժէնը
յիսուն կոպէկից սկսած: Առաքելը չէր ուղում, առնողն
ես էի, ուրեմն ես եմ աշխատել այս հապսառութիւնը,
իմս է այն, միմիայն իմս: Խոկ այդ լակոտն եկել է ու
ասում: «Ճուր ինձ կէսը»: Փահ, գժուել եմ, որ տամ:
Եթէ գժուել եմ, ինչու չեն ինձ գժատուն տանում:
(Քրգուում է): Համեցէք, այս էլ ձեզ բարեգործութիւն:
Որդեգիր եմ վերցրել հօր յիշատակի համար, ուսում
տուել, մարդ շնորհ տարիներով պահել եմ մօրն ու
քոյրերին, ինչ է այսօր վարձաւ-Քոռ ապերախտութիւն:

ՍԱՂԱԹԷԼ. Լաւ, քիչ խառնիր արխմդ: Մի կերպ
ռեխը կըկապենք, կըդնայ:

ԱՆԴՐԷԱՍ. Ի հարկէ, պէտք է ռեխը կապել: Ես
խօմ չեմ կարող նրա հետ դատարան գնալ: Կըդցի ինձ
մի թոկից փախած աղվակատի ձեռք, արի ու ազա-
տուիր...

ՎԱՐԴԱՆ. (Ենըս է մտնում նախասենեակից: Հա-

գած է սեւ արխալուղ, դեղնազոյն պիջակ արխալուղից
կարծ, մէջքին արծաթեայ գօտի: Խօսում է շատ ան-
փոյթ, Շամախու բարձառով): Ան Արտաշէսը եկալ ա,
ուզում ա քեզ տեսնի:

ԱՆԴՐԻԱՆ. Խնդրիլ: (Վարդանը յիտ է զնում): Սա-
դաթէլ, դու անցկաց դրասենեակ, յետոյ կըգաս-
ՍԱՂԱԹԻԼ. (Գնում է զրասենեակ, դուները ծած-
կելով):

**ԱՆԴՐԻԱՆ. (Նստում է իւր քազկաթոռի վրայ, ուշ-
քը ժողովելով եւ դէմքին սիրալիր արտայպտութիւն
տալով):**

ՏԵՍԻԼ V

**ԱՆԴՐԻԱՆ, ՕԹԱՐԵԱՆ, ՅԵՏՈՅ ԲԱԳԻԱՏ, ԱԻԵԼԻ ՈՒՃ – ՍԱ-
ՀԱԹԷԼ.**

**ՕԹԱՐԵԱՆ. (Ներս է մտնում նախասենեակից, հան-
դարտ եւ քաղաքավարի գլուխ է տալիս):**

**ԱՆԴՐԻԱՆ. (Սիրալիր) Բարով, որդի, Այդ ի՞նչ է,
դու մեզ մոռացել ես:**

**ՕԹԱՐԵԱՆ. (Սեղմելով Անդրէասի ծեռը): Երէկ ձեր
տանն էի:**

**ԱՆԴՐԻԱՆ. Հա, բաս ինձ չեն ասել: Նստիր, այ-
սօր մեզ մոտ ես ճաշում: Մի քիչ խօսենք, յետոյ կանց-
նենք այն կողմ: Գործ ճարեցիր:**

**ՕԹԱՐԵԱՆ. (Նստում է Անդրէասի զրասեղանի քով,
երեսը դէպի հասարակութիւն): Այո, մի քանի մասնա-
ւոր դասեր:**

**ԲԱԳԻԱՏ. (Գալիս է ծախ դռներից երկայն կօշիկ-
ներով եւ նաւթի զներով ծածկուած պիջակով: Նկա-
տելով Օթարեանին, թեթեւ ցնցում է, սառը գլուխ է
տալիս, նստում է ծախ զրասեղանի քով եւ անմիջա-
պէս սկսում է գործով զբաղութել – չափում է կարկենով,
զծագրում, միեւնոյն ժամանակ, ուշադիր է դէպի խօ-
սակցութիւնը):**

ԱՆԴՐԻԱՆ. Դասեր, Այնքան ուսում ստանալուց յեռայ վարժապետութիւն ես անում:

ՕԹԱՐԵԱՆ. Ի՞նչ արած, առ այդմ ստիպուած եմ:

ԱՆԴՐԻԱՆ. Բայց գրանով փոր չի կշտանալ, որդի, արի քեզ համար մի տեղ սարքենք մեր գործերում: Հըմ, ինչ կասես, Բագրատ, երևի, քո գործարանում մի պաշտօն կը լինի: Ի հարկէ, յարմար պաշտօն ..

ԲԱԳՐԱՏ. (Կտրուկ), Իմ գործարանը գեռ շուտ պատրաստ չի լինի:

ՕԹԱՐԵԱՆ Ծնորհակալ եմ, պարոն Անդրէաս, ես ծառայելու միաք չունիմ:

ԱՆԴՐԻԱՆ. Ամծիթ ես համարում:

ՕԹԱՐԵԱՆ. Ոչ, կարծում եմ, որ կարիք չեմ ունենալ ծառայելու: Իսկ եթէ ունենամ էլ, յամենայն գէպս, ձեր որդուն չեմ ծառայիլ:

ԱՆԴՐԻԱՆ. Ինչու:

ԲԱԳՐԱՏ. (Կծու եղանակով, գործը շընդհատելով) Իդէալիստի ճերմակ փետուրները կարող են սեանալ բուրժուայի գործերում:

ՕԹԱՐԵԱՆ. (Զսպուած) Միայն այն դէպում, երբ այդ գործերը մուրոտ են:

ԱՆԴՐԻԱՆ. Չեմ հասկանում, ինչու էք այդպէս գըրգուած խօսում երկու ընկեր:

ԲԱԳՐԱՏ. (Հեղնօրէն) Ընկեր, հը, ընկեր: Ոչ, հայրիկ, մեր մէջ ընկերական ոչինչ չը կայ:

ԱՆԴՐԻԱՆ. (Յանդիմանութեամբ) Բագրատ:

ԲԱԳՐԱՏ. (Մատիտն ու կարկինը ծգելով սեղանի վրայ): Հայրիկ, ես կարծում եմ, որ ժամանակ է մեր հաշիներն այդ պարոնի հետ պարզելու: Նա ինչոր պահանջներ ունի քեզանից:

ԱՆԴՐԻԱՆ. (Խիստ): Այդ քո գործը չէ: Դու քո բանին կաց:

ԲԱԳՐԱՏ. (Վերկենալով) Ներիր, հայրիկ, ես չեմ կարող սառը վերաբերուել դէպի մի մարդ, որ ուզում

է մեր անունը խայտառակել։ Այն էլ մի այնպիսի մարդ, որ գեռ չի գուրս եկել մեր փողերով զնուած հագստից։

ՕթԱրեԱն. (Յուզուելով վեր է կենում, բայց իսկոյն եւ եթ զսպում է իրան։ Պարոն Անդրէաս, զսպեցէք ձեր որդուն, ես չեմ կամենում նրա հետ վէճի բռնուել այստեղ։

ԲԱԳԻՐԱԾ. Իսկ ես թոյլ եմ տալիս ինձ պահանջել ձեզանից բացատրութիւն, Հայրիկը կարող է ձեզ հետ վարուել ինչպէս կամենում է, իսկ մեր մէջ պէտք է ամեն բան պարզուի հէնց այժմ։

ԱՆԴՐԷԱԾ. (Դրզուած) Ասացի, որ այդ քո գործը չէ, մի խառնուիր։

ԲԱԳԻՐԱԾ. Բայց, հայրիկ, իմ ինքնասիրութիւնը վիշտաւորուած է։ Ուստի թոյլ տուր նրան մի քանի հարցեր առաջարկեր։ (Դառնում է Օթարեանին)։ Ես կըկամենայի իմանալ, դուք բարերարուած եք մեզանից, թէ ոչ։

ՕթԱրեԱն. (Զսպուած) Այս։

ԲԱԳԻՐԱԾ. Ո՞վ է ձեզ խնամել և բարձր ուսում տուել։

ՕթԱրեԱն. (Զսպուած) Զեր հայրը։

ԲԱԳԻՐԱԾ. Ո՞վ է տարիներ շարունակ պահպանել և կերակրել ձեր մօրն ու քոյրերին։

ՕթԱրեԱն. Զեր հայրը։

ԲԱԳԻՐԱԾ. Եւ այդ բոլորը խսստովանելուց յետոյ յանդգնում էք լինել երախտամնու։ Եւ այդ բոլորից յետոյ, դու, հայրիկ, պահանջում ես, որ ես սանոր վերաբերուեմ այդ մարդուն։

ԱՆԴՐԷԱԾ. Ես ասում եմ, որ այդ քո գործը չէ։ Դու ոչինչ չես հասկանում։

ՕթԱրեԱն. (Բազրատին) Լսեցէք, պարոն, ձեզ հետ ես այսօր մտադիր չեմ հաշուի նստելու, բայց որովհետեւ ստիպում էք, կըխօսեմ։ Այս, ես էլիզբարեանների խնամքով մեծացած մարդ եմ։ Դուք իննը տարի պահել ու պահպանել էք ինձ, մօրս ու քոյրերիս։ Բայց ինչպէս

—այս միայն ինձ է յայտնիւ Այն, ինչոր ես եմ զգացել տարիների ընթացքում, չեք ցանկանալ զգալ ոչ մի ինքնասէր մարդու: Դուք ձեր ամեն մի կոպէկի մէջ թոյն էք սրսկել և այնպէս տուել ինձ...

ԱՆԴԻՌԵԱՄ. Պարտական մնամ, եթէ արած լաւութիւններս գոնէ մի անդամ էլ երեսովդ տուած լինիմ:

ՕԹԱՐԵԱՆ. Բայց միթէ պիտի խօսէիք, որ ես զգայի իմ ողորմելի դրութիւնը, Այս, իմ վերաբերմամբ գուք արտաքուստ քաղաքավարի էք եղել: Բայց այն, ինչոր խօսքերով չեք արտայայտել, արտայայտել էք ձևերով, աշքունքով, շարժումներով: Դուք ինձ ստորացրել էք իմ աշքում ամեն անդամ, երբ ես դժբաղդութիւն եմ ունեցել ձեզ ձեռք մեկնելու: Դուք խայլել էք իմ ինքնասիրութիւնը լուռ, ինչպէս, ներեցէք ասել, մի կարիճ...

ԲԱԳԻՐԱԾ. (Հեզնօրէն) Զարմանալի է, որ տարիներ շարունակ լուել էք և նոր էք միայն ձայն բարձրացնում:

ՕԹԱՐԵԱՆ. Ախ, լուել եմ, որովհետեւ խնայում էի մօրս ու քոյրերիս Գէտէի, որ եթէ ձայն բարձրացնեմ, պիտի զրկէիք նրանց մի կտոր հացից: Ես մտածում էի այսպէս: «Կըքաշեմ մի կերպ այս վիրաւորանքները և մի օր, բոլոր պարագերս վճարելով կլիզբարեաններին, կը թեթևանամ հոգովիս: Մայրս էլ է լուել Բայց հարցւէք, ինչ լուութիւն է եղել այդ: (Անդրէասի կողմ): Ամսական քսանուհինդ ուուրի տալով, քսան ու հինգ անդամ նախատել էք նրան: «Նատ ես ծախսում, ապրիր ներքնայարկերում, կար արա ուրիշների համար, լուացք արա, թող աղջկերդ աղախին մտնեն...»

ԱՆԴԻՌԵԱՄ. (Անհամընդոր) Տէր, մեղայ Քեզ, Աստուած:

ՕԹԱՐԵԱՆ. Իսկ մի օր այնքան անգութ էք եղել, որ առաջարկել էք նրան աղքատանոց մտնել: Չեր խօսքերն ասեղների պէս խօթուել են խեղճ կնոջ սիրտը: Քոյրերս այսօր էլ առանց արտասուրի չեն կարողանում յիշել այդ օրը: Եւ ինչու, ով է եղել իմ մայրը: Զէ որ

Ճեր հաւասար ընկերոջ այրին: Մի կին, որ նոյնչափ հաշրուստ է, որչափ դուք: Երբ նա արտասուքը աչքերին պատմում էր իւր կրած վշտերը, արիւնս պաղեց երակ-ներիս մէջ: Ես անզօրութիւնից սկսեցի մաղերս փետառել, մատներս կրծուել: Ես վրիժառութեան միջացներ էի վնարում, չէի գտնում: Եւ ահա այդ ժամանակ հէնց մայրս ինքը հասաւ ինձ օգնութեան...

ԱՆԴՐԻԱՆ. Եւ ասաց, որ ես կողոպտել եմ քո հօրը, հա հա հա:

ԲԱԳՐԱՏ. Եւ զրպարտեց իւր բարերարին ոև ապերախտութեամբ:

ՕԹԱՐԵԱՆ. (Ուշք չը դարձնելով թագրատի կողմ) Այս, պարմու նա հազորդեց ինձ իմ հօր վերջին խօսքերը. «Ես մեռնում եմ աղքատութեան մէջ, ինձ կողոպտեց ընկերս: Ահա քեզ այս թղթերը, կը յանձնես որուս, երբ ուսումը կաւարտի»:

ԱՆԴՐԻԱՆ. (Ծնցուելով) Թղթեր, ինչ թղթեր:

ՕԹԱՐԵԱՆ. Մի քանի ընկերական պայմանագրեր, որոնք պիտի ապացուցանեն, թէ ճեր հարստութեան կէսն ինձ է պատկանում: Դուք, օգտուելով իմ հօր ծանր և երկարատև հիւանդութիւնից, խարել էք նրան օրի վրայ և ճեր անունով վերածել բոլորը, ինչ-որ եղել է ընկերական:

ԱՆԴՐԻԱՆ. (Վրդովուելով) Այդ սուտ է: Ես ինչ որ ունիմ, օրէնքով և նօտարական դօկումենտներով է հպատատուած ինձ վրայ:

ՕԹԱՐԵԱՆ. Այս, բայց առանց մի կոպէկ վճարելու: Դուք կարողացել էք խարել նոյն իսկ օրէնքները: Ահա հէնց այս բանը պիտի ապացուցանեն իմ հօր թղթերը:

ԲԱԳՐԱՏ. (Կատաղի) Դուքս այսուեղից, ստախօս:

ՕԹԱՐԵԱՆ. (Հպարտ եւ կատաղի) Պարմն, խնայեցէք ճեր հօրը...

ԱՆԴՐԻԱՆ. (Չեռն ուժգին զարկելով սեղանին, ոտ-

քի է կանգնում): Լոիր, ասում եմ, դու ինձ կատաղեց նում ես:

ՍԱԴԱԹԵԼ. (Ներս է մտնում:)

ԲԱԳԻՐԱԾ. Բայց նա քեզ անպատուեց: Նա քեզ կողպատիչ անուանեց:

ԱՆԴՐԵԱՆ. (Զսպում է իրան): Թող անուանի, ով է հաւատացողը: Երեխայ է, ոչինչ չի հասկանում, տաքանում է: (Դառնում է Օթարենանին): Որդի, այդ բոլորը, ինչ որ ասացիր, դատարկ բաներ են, Եսքեզ ներում եմ հօր պէս: Խօսենք չափահասների նման: Գիտեմ, արունդ եռ է դալիս, ապրել ես ուզում, բայց չունիս է՛հ, մտածել ես մտածել ու այդ բանը հնարել...

ՕԹԱՐԵԱՆ. (Վրդովման նշան է անում:)

ԱՆԴՐԵԱՆ. Մի տաքանար, որդի, խօսենք հանդարտ: Էհ, ինչ արած, շատ եմ օգնել հօրդ յիշատակի համար, էլի կօդնեմ: Արի ստացիր ինձանից մի բանի հազար ոռորդի, թուղթ տուր, որ ինձանից պահանջ չունիս և ինձ էլ ու քեզ էլ ազատիր դլխացաւից:

ԲԱԳԻՐԱԾ. (Դրականապէս) Երբէք ես թոյլ չեմ տալ մի կոպէկ անդամ տալ նրան:

ԱՆԴՐԵԱՆ. Մեղայ քեզ Տէր Աստուած, վերջապէս, ձայնդ կարելու ես, թէ չէ:

ՍԱԴԱԹԵԼ. (Մի կողմից կամացուկ Բագրատին) Թող տայ, դու չես հասկանում:

ԲԱԳԻՐԱԾ. (Ձը լսելով Սաղաթէլին) Այդ անկարելի է: Փող առաջարկել այդ մարդուն, կընշանակէ վախենալ նրանից: Թող դիմի դատարան, ես ինքս քեզ կը պաշտպանեմ նրա զրպարտութեան դէմ, որովհետեւ համոզուած եմ, որ նա քեզ զրպարտում է:

ՕԹԱՐԵԱՆ. Զդուշացէք, պարսն, այդ խօսքերը կարող են թանգ նստել ձեզ:

ԲԱԳԻՐԱԾ. Աա, թողէք այդ ֆռազները: Ես ձեր բարոյական ոյժը լաւ եմ ճանաչում և զուր չեմ միշտ ձեզ արհամարհել: Սակայն ինչու աւելորդ խօսքեր շռայլել:

ահա կարճ-կտրական իմ խօսքը. արէք, ինչոր կարող էք, ես ձեր հակառակորդն եմ: (Շտապով իւր զրասեղանից վերցնում է մի քանի թղթեր): Քեռի, ես գնում եմ գործարան: Պատուիրիր Զէյլմանին, որ խողովակները շուտով ուղարկի: Հայրիկ, ինձ ճաշի չըսպասէք: (Արագութեամբ հեռանում է նախասենեակի դռներով, ծգելով Օթարեանի վրայ մի արհամարհական հայեացք):

ՍՍՂԱԹԷԼ. (Մեկուսի): Աֆարիմ տղայ, կրակի կտոր է:

ՏԵՍԻԼ VIII

ՆՈՑՆՔ; ԱՌԱՆՑ ԲՍԴՐԱՏԻ, ՑԵՏՈՑ ՄԱՐԳԱՐԻՏ

ԱՆԴՐԻԱՆ. Տեսնում ես, որդի, էլլի մենք, հին մարդիկս, աւելի բարի ենք, քան դուք, նորերդ: Արի, բարը փէշիցդ թափիր, սարացիր երեք հազար ռուբլի, հաշտուենք: ՕԹԱՐԵԱՆ. Էլ ուրիշ ասելիք չունիք:

ԱՆԴՐԻԱՆ. Ուրեմն, համաձայն ես (Ժալով Սաղաթէլին սնդուկի քանալին): Սաղաթէլ, տուր ինձ չէքի տետրակը: Իսկ դու նստիր և մի թուղթ գրիր, որ ուշնչ պահանջ չունիս:

ՍՍՂԱԹԷԼ. (Բանալին առնելով, մօտենում է սընդուկին):

ՕԹԱՐԵԱՆ. Մնաք բարճվ:

ՍՍՂԱԹԷԼ, (Դանգ է առնում):

ԱՆԴՐԻԱՆ. Ուր: Սպասիր: Հաշիւը հաշիւ, բարեկամութիւնը— բարեկամութիւն: Դու մեղ մօտ պիտի ճաշես:

ՕԹԱՐԵԱՆ. Մնացէք բարով:

ՄԱՐԳԱՐԻՏ. (Դուքս է գալիս ծախ կողմի դռներից տնային համեստ հազստով: Օթարեանին): Մայրիկը ձեզ հրաւիրում է ճաշի:

ՕԹԱՐԵԱՆ. (Քայլերն ուղղել էր դէպի նախասենեակ, կանգ է առնում):

ԱՆԴՐԻԱՆ. Տեսնում ես, քեզ ինչպէս են սիրում

այս տանը։ Իսկ դու ուզում ես երես դարձնել մեռանից։

ՄԱՐԳԱՐԻԾ. (Զարմացած նայում է Օթարեանին։) Երես դարձնել մեղանից։ Ինչո՞ւ,

ԱՆԴԻՇԱԾ. Ով գիտէ, ինչոր հակառակ քամի է փշել։ Բայց դու նրան խեթի կըքերես։ Սաղաթէլ, մենք գնանք, Մարդարիտ, երևի, նրան կամաշեցնի, (Օթարեանին)։ Իէ, որդի, շատ սպասեցնել չըտաս մեղ։ (Գնում է Սաղաթէլի հետ ծախ զոներով)։

ՏԵՍԻԼ IX

ՄԱՐԳԱՐԻԾ ԵՒ ՕԹԱՐԵԱՆ

ՄԱՐԳԱՐԻԾ. Այդ ի՞նչ է նշանակում։ (Բոնում է նրա ձեռը ջերմագին)։ Ինչո՞ւ այդպէս այլայլուած ես։

ՕԹԱՐԵԱՆ. Ոչինչ, դատարկ բան է։

ՄԱՐԳԱՐԻԾ. Ի՞նչ է պատահել, ինչո՞ւ չես ճաշի մնում։ Ի՞նչ են նշանակում հայրիկի խօսքերը. «դու ուզում ես մեղանից երես դարձնել»։ Ասա, ես համբերութիւն չունիմ։

ՕԹԱՐԵԱՆ. Եթէ կարելի է, Մարդարիտ, այսօր ինս ճանից ոչինչ մի հարցնիր։

ՄԱՐԳԱՐԻԾ. (Վշտացած, քաց է թողնում նրա ձեռով)։ Շատ գեղեցիկ, չեմ հարցնիլ։ Եթէ կամենաս, ես քեզ չեմ էլ պահիլ, քանի որ քեզ համար ճանձրալի է մնալ։

ՕԹԱՐԵԱՆ. Ախ, Մարդարիտ, թաղ այդ երեխայական ձևերը, դու նման չես ուրիշ կանանց։

ՄԱՐԳԱՐԻԾ. Բայց դու ինձ հետ վարւում ես ինչպէս մի երեխայի հետ. ուր են քո խօսքերը, թէ մի-մեանց սիրող անձանց մէջ չը պիտի լինի ոչ մի դադունկը։ Այդպէս ես կատարում երդումդ։

ՕԹԱՐԵԱՆ. (Շփոթուած) Բայց կան գործեր, որոնց հետ դու չը պիտի ծանօթանաս։ Քո սիրտը դեռ շատ

յանուկ է։ (Նորից ըստում է նրա ծեռը եւ ջնրմ սեղմում)։

ՄԱՐԳԱՐԻԾ. Իսկ ես կարծում եի, թէ չը կայ դործ, որ քեզ վերաբերուի և ինձ ոչ։ (Ձեռը խլելով) Թաղ ինձ, դու ինձ վերաւորում ես, (Երեսը դարձնում է)։ Դա անգրթութիւն է սիրող կնոջ վերաբերմամբ։

ՕԹԱՐԵԱՆ. Ի՞նչ արած, վերաւորուած ինքնասիրութիւնը երեմն անդութ է լինում։

ՄԱՐԳԱՐԻԾ. Վերաւորուած ինքնասիրութիւնը։ Ում ինքնասիրութիւնն է վերաւորուել։ Քոնը Ո՞վ է վերաւորել։ Հայրս, թէ եղբայրս։ (Դադար)։ Բայց դու լոնւմ ես։ Դու ինձանից դարձնում ես երեսդ։ Բաւական է, մի փորձիր համբերութիւնս։ Ես ատում եմ կեղծիքը, հասկանում եմ Ասա պարզ և աներկիւդ, ի՞նչ է պատահել։ Աս, հասկանում եմ։ Դու խօսել ես հօրս հետ իմ յասին, իմնդել ես նրա համաձայնութիւնը։ Մերժել է... Բայց ոչ, ի՞նչ եմ ասում։ Հայրիկը սիրալիր էր գեպի քեզ։ Վերջապէս, նրա մերժումը չի կարող քեզ վերաւորել, քանի որ ես սիրում եմ քեզ և իմ գլխի տէրը միմիայն ես եմ։ (Դադար)։ Սպասիր, սպասիր, իմ մէջ ծագեց ուրիշ կասկած։ Դու նրա հետ խօսել ես իմ... Բայց ոչ, դու ընդունակ չես այդ տեսակ անվայել սակարկութեան։ Վերջապէս, ասելու ես, թէ ոչ։

ՕԹԱՐԵԱՆ. Դու բռնութիւն ես գործ զնում իմ կամքի վրայ, Մարգարիտ, Կրկնում եմ, կան բաներ, որոնց հետ դու չը պիտի ծանօթանաս։

ՄԱՐԳԱՐԻԾ. (Եռանդով)։ Ոչ, ասում եմ։ Մազի չափ գաղտնիք չը պիտի ունենաս ինձանից։ Կամենում ես, այս պայմանով սիրիր ինձ, ոչ—կարող ես հեռանալ։ Ուրիշ տեսակի փոխադարձ սէր ես չեմ ընդունում։

ՕԹԱՐԵԱՆ. (Մի վճռական շարժումն անելով)։ Ահ, թող լինի, ինչոր լինելու է։ Միւնոյնն է, անհնարին է քեզանից թագցնել։

ՄԱՐԳԱՐԻԾ. (Դրեթէ շնչասպառ) Հապա, հապա։

ՕԹԱՐԵԱՆ. Ասա ինձ, Մարգարիտ, սիրում ես հօրդ։
ՄԱՐԴԱՐԻԾ. Ե՞ս, իմ հօրը։ (Դրական եւ զերծաւ-
զին) Այս։

ՕԹԱՐԵԱՆ. Ոչ միայն իբրև զաւակ, ոչ միայն արիւ-
նակցի սիրով, այլ և դիտակցօրէն։

ՄԱՐԴԱՐԻԾ. Չեմ հասկանում միտքդ։

ՕԹԱՐԵԱՆ. Ուզում եմ ասել, յարդում ես նրան ինչ-
պէս մարդու։

ՄԱՐԴԱՐԻԾ. Անտարակոյս։ ԶԵՇ որ իմ հայրն էլ մի
մարդ է։

ՕԹԱՐԵԱՆ. Եւ աղնիւ մարդ, այնպէս չէ։

ՄԱՐԴԱՐԻԾ. Անկասկած, իմ հայրն անազնիւ չէ։

ՕԹԱՐԵԱՆ. Համոզմունքով ես ասում այդ։

ՄԱՐԴԱՐԻԾ. Խորին համոզմունքով, Գոնէ ինձ մին-
չև օրս յայտնի չէ նրա որև է անազնիւ արարքը։ Յար-
դում եմ ինչպէս մի աշխատասէր և խելօք մարդու, որ
երկար տարիների տառապանքով ապահովել է իւր զա-
գակների դրութիւնը։ Նա ինքը տգէտ լինելով, իւր զա-
ւակների կրթութեան համար ոչինչ չի խնայել։ (Դադար)։
Բայց ինչո՞ւ ես կասկածանքով նայում ինձ, միթէ չես
հաւատում իմ անկեղծութեանը։

ՕԹԱՐԵԱՆ. Եւ ո՞չ մի թերութիւն չես գտնում հօ-
րդդ մէջ։

ՄԱՐԴԱՐԻԾ. Ինչո՞ւ չէ։ Նա փողասէր է, իւր հաշիւ-
ների մէջ խիստ է, մտածում է միմիայն իւր գործերի
մասին։ Բայց չէ որ նրա շրջանի մարդիկ բոլորն էլ այդ-
պէս են։ Համարել նրան անազնիւ, ոչ, անկարելի է։

ՕԹԱՐԵԱՆ։ (Դադար) Ի՞նչ կանէիր, Մարգարիտ,
եթէ մի օր համոզուէիր, որ նա անազնիւ է։

ՄԱՐԴԱՐԻԾ։ (Դառնագին եւ զայրացած) Արտաշէս...
ՕԹԱՐԵԱՆ։ (Տաքանալով) Այս, այս, անազնիւ է
գոնէ իր անցեալում։

ՄԱՐԴԱՐԻԾ։ (Նոյն եղանակով) Արտաշէս, մտածիր,
ինչ ես ասում։

ՕԹԱՐԵԱՆ: Ասում եմ այն, ինչ որ գիտեմ: Քո հօր անցեալում կայ մի սոսկալի յանցանկը:

ՄԱՐԴԱՐԻԾ: Եւ ինչ է այդ յանցանկը:

ՕԹԱՐԵԱՆ: (Ձերմ շեշտով) Մի անողորմ զրկողութիւն:

Թիւն:

ՄԱՐԴԱՐԻԾ: (Յնցումլով) Ո՞ւմ է զրկել նա:

ՕԹԱՐԵԱՆ: Մի անտեր և անօգնական մնացած ընտանիք: Իւր հաւատարիմ ընկերոջ որբ զաւակներին:

ՄԱՐԴԱՐԻԾ: Քեզ:

ՕԹԱՐԵԱՆ: Ինձ, մօրս և քոյրերիս...

ՄԱՐԴԱՐԻԾ: Մհամ... (Թուլացած ընկնում է աթոռի վրայ, ծեռներով երեսը ծածկնլով)

Երկարատեր լոռութիւն:

ՕԹԱՐԵԱՆ: Դու ինքդ կամեցար իմանալ ճշմարտութիւնը:

Թիւնը:

ՄԱՐԴԱՐԻԾ: (Ռւշքը ժողովելով, ոտքի է կանգնում) Ապացուցիր ասածդու: Լսում ես, ապա թէ ոչ, կատեմ քեզ ինչպէս մի զրպարտողի: Բայց ոչ ոչ, դու չես կարող զրպարտել քո բարերարին: Դու նրան սիրում էիր և յարգում: Անշուշտ այստեղ մի թիւրիմացութիւն կայ: Դու պէտք է բացատրես բոլորը: Միենոյնն է, թող նա լինի իմ պաշտելի ծնողը, իսկ դու իմ երջանկութիւնը՝ երկուսիցդ աւելի ինձ համար թանդ է ճշմարտութիւնը:

ԶԱՐՈՒՀԻ: (Երեւում է ծախ դռների մէջ:) Զեղ ճաշի են սպասում:

ՄԱՐԴԱՐԻԾ: Խսկոյն:

ԶԱՐՈՒՀԻ: (Գնում է յետա:

ՕԹԱՐԵԱՆ: Համաձայնուիր, որ այլ ևս իրաւունք չունիմ այս տունն այցելելու:

ՄԱՐԴԱՐԻԾ: Ոչ: Ընդհակառակը, պէտք է այցելես: Դու իմ սէրը թունաւորեցիր, դու էլ պարտաւոր ես բժշկել այն: Այժմ կարող ես հեռանալ, բայց վաղը դու կըտաս ինձ բացատրութիւն:

ՕԹԱՐԵԱՆ. (Գլուխ է տալիս եւ արագ քայլերով
գնում է նախասենեակ:)

ՄԱՐԳԱՐԻՏ: (Թոյլ քայլերով գնում է դէպի ծախ
եւ, կանգ առնելով, յենում է դռներին.)

(Վարագոյքն իշնում է հանդարս):

ՇԻՐՎԱՆԶԱԴԵ

(Պը շաբանակուի)